




Superior Court of California, County of Los Angeles

Stanley Mosk Courthouse, Family Law Division, Chambers of Amy Pellman
111 North Hill St., Los Angeles, CA 90012


Այս նամակն այն մարդկանց համար է, ովքեր ունեն ընտանեկան դատական գործեր իմ դատարանում: Հնարավոր է, որ այժմ դժվարին և շփոթեցնող ժամանակ է ձեզ համար: Հնարավոր է, որ համաձայն չեք մյուս անձի հետ օժանդակության, գույքը կիսելու և երեխաների բնակավայրի թեմաների շուրջ: Մեր դատարանը ռեսուրսներ և տեղեկություններ է առաջարկում, որոնք կարող են օգնել ձեզ պակաս սթրեսային դարձնել այս ժամանակը: Ահա մի քանիսը:

 **LA Court.org** – մեր կայքն օգտակար տեղեկություններ և ռեսուրսներ է պարունակում

- Իմացե՛ք՝ ինչ ակնկալել դատարանում և ձեր լսման ընթացքում,
- Տեղեկացե՛ք դատական լուսմից պակաս սթրեսային, ավելի արագ և ավելի էժան տարբերակների մասին, և
- Լեզվական օգնություն ստացե՛ք, եթե **անվճար** թարգմանչի կամ հաշմանդամության հարմարեցման կարիք ունեք ձեր լսման համար:



Եթե անվճար թարգմանչի կամ հաշմանդամության պատճառով հարմարեցման կարիք ունեք, խնդրում ենք ուղարկել մեզ ձեր խնդրանքը ձեր լուսմից առնվազն **10 աշխատանքային օր** առաջ: Եթե մենք չկարողանանք թարգմանիչ գտնել ձեր լսման ամսաթվի համար, ապա կտեղափոխենք ձեր լսումը: Հայցը ներկայացրեք այստեղ՝ www.lacourt.org/irud/ui/index.aspx?ct=FL

 **Արբիտրաժ՝ ավելի արագ, պակաս սթրեսային և ավելի էժան լուծումների համար**

- Եթե դուք երեխայի խնամակալության խնդիրներ ունեք կամ ներկայացրել եք Հրամանի հայտ, ապա արբիտրաժը պարտադիր է: Ընտանեկան գործերով դատարանի ծառայություններում միջնորդը հոգեկան առողջության մասնագետ է, որը փորձառու է ծնողներին օգնելու հարցում, որպեսզի լուծումներ գտնեն և ծնողական ծրագիր մշակեն:
- Եթե դատարան գաք, դատավորը կարող է ուղարկել ձեզ փաստաբանի օգնությամբ անցկացվող արբիտրաժի:
- Եթե ցանկանում եք լուծել ձեր խնդիրները դատական համակարգից դուրս, ապա կարող եք գնալ մասնավոր միջնորդի մոտ: Այս միջնորդները կարող են լինել փաստաբաններ կամ հոգեկան առողջության մասնագետներ, որոնք կոգնեն ձեզ այլընտրանքային լուծումներ գտնել, որոնք ավելի արագ են, հեշտ և ավելի էժան, քան դատարան գնալը: Դուք դատական լսման իրավունք ունեք, և դատավորը կարող է որոշում կայացնել ձեր գործի վերաբերյալ: Սակայն շատ կողմեր, մասնավորապես, եթե երեխաներ ունեն, գտնում են, որ դատարանից դուրս իրենց գործն ամբողջությամբ կամ մասամբ լուծելը պակաս

սթրեսային է: Միջնորդը կարող է բացատրել և ուսումնասիրել ձեր տարբերակները:



Վեճերի առցանց լուծում (Online Dispute Resolution, ODR)

- ODR ծրագիրը հասանելի է ծնողներին, որպեսզի օգնի բանակցել խնամակալության և այցելության հարցերը, ինչպես նաև «ծնողական ծրագրի համաձայնության» մշակման համար:
- Սկսելու համար այցելե՛ք <https://losangelescafam.modria.com/> կայքը:
- Եթե կարողանաք լուծել երեխաների խնամակալության և այցելությունների հետ բոլոր խնդիրներն, ապա հարկավոր չէ դատարան այցելել արբիտրաժի հանդիպման համար:
- Այս ծրագիրն այժմ անվճար է:



Արդյո՞ք պետք է փաստաբան վարձեք:

Կան իրավական խորհրդի և իրավական տեղեկության ստացման մի քանի միջոցներ, ներառյալ.

- Վարձեք ընտանեկան օրենսդրության փաստաբան ձեր գործի բոլոր կամ կարևոր հատվածների համար: Շատ փաստաբաններ առաջարկում են «առանձին» կամ սահմանափակ ներկայացում: Սա նշանակում է, որ նրանք կօգնեն ձեզ ձեր գործի ամենաբարդ հատվածներում:
- Այցելե՛ք դասընթացներ դատարանի օգնության կենտրոնում, որպեսզի տեղեկանաք՝ ինչպես ինքնուրույն գործեք ձեր դատական գործի ընթացքում: Ավելին իմացե՛ք www.lacourt.org/selfhelp/selfhelp.aspx կայքում:
- Օգնություն ստացե՛ք իրավական ծառայությունների գործակալությունից կամ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունից: www.lacourt.org/selfhelp/divorceorseparation/SH_DS001.aspx



Արդյո՞ք վախենում եք ձեր գործի մյուս կողմից:

Կարող եք աջակից մեկին բերել ձեզ հետ դատարան, սակայն այդ անձը չի կարող խոսել լսման ընթացքում: Կարող եք նաև խնդրել դատարանին ձեր պաշտպանության հրամաններ արձակել: Եթե փաստաբան չունեք և ձևաթղթերը լրացնելու հարցում օգնության կարիք ունեք, կարող եք դատարան փնտրել, որտեղ առաջարկվում են այս ծառայությունները: www.lacourt.org/selfhelp/abuseandharassment/SH_AH001.aspx



Այլ հարցերի դեպքում

Խնդրում ենք այցելել մեր կայքը (LACourt.org): Եվ պահպանեք այս նամակը: Հնարավոր է, որ այն ձեզ ապագայում պետք գա որպես ուղեցույց:

Հարգանքներով,

Amy Pellman, Վերահսկող դատավոր, Ընտանեկան օրենսդրության բաժին

Ուշադրություն. այս փաստաթուղթը պարունակում է կարևոր տեղեկություններ: Խնդրում ենք տեսնել Լոս Անջելեսի Առաջին աստիճանի դատարանի կայքի Ընտանեկան օրենսդրության էջը ([անգլերեն](#), [կորեերեն](#), [վիետնամերեն](#), [խապաներեն](#), [հայերեն](#), [չինարեն](#)) լեզվով թարգմանության համար: